ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԹԵՎԱՆՅԱՆ» ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/252 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Չափերը: 2600x1800x1960մմ Կառուցվածքը՝ հենասյուներ - 4 հատ, բազմոցով կախաձող - 1 հատ, կցորդիչներ - 2 հատ: Նյութեր՝ փայտ, մետաղ, ակրիլային ներկ, լաք, փոշեներկ: Արտաքին տեսքը՝ համաձայն նկարի: Հենասյունը պետք է պատրաստված լինի 4 սյունից («Երեքնուկ» տեսակով)՝ առնվազն 100x100 մմ խաչմերուկով, պատրաստված փշատերեւ տեսակի սոսնդզված փայտե սյուներից՝ բաղկացած երեք կամ չորս շերտ չոր տախտակներից (12%-ից ոչ ավելի խոնավության պարունակությամբ): Սյուների երեսներին, կենտրոնում, ամբողջ երկարությամբ պետք է լինի մշակված ռելիեֆային ակոս: Բոլոր սյուները պետք է հղկվեն, եզրերը կլորացվեն (շառավղը 17-20 մմ): Մշակված մակերեսները պետք է ծածկված լինեն ներկված և անգույն լաքով: Հենասյուների հիմքում պետք է տեղադրվեն 4 մմ և ավելի հաստությամբ, 700-708 մմ երկարությամբ մետաղից պատրաստված ներկառուցվող տարրեր, անկյունի ձև ունեցող հատվածում լայնությունը ավելի քան 80 մմ: Ճոճանակի վերին մասը պետք է կառուցվի որպես մետաղական խողովակների ֆերմա, որի տրամագիծը 26,5 մմ է և պատի հաստությունը ≥ 2,8 մմ: Կապերը պետք է պատրաստվեն 26,8-33,5 մմ տրամագծով խողովակից: Բազմոցի շրջանակը պետք է պատրաստված լինի 26,5 մմ-ից ավելի տրամագծով մետաղյա կլոր խողովակից և առնվազն 6x60 մմ մետաղական ժապավենից: Բազմոցի նստատեղը և թիկունքը պետք է պատրաստված լինեն չոր տախտակներից՝ խոնավությունը մինչև 12% փայտից: Բոլոր տախտակները պետք է հղկվեն, եզրերը կլորացվեն: Մշակված մակերեսները պետք է ծածկված լինեն ներկված և անգույն լաքով: Բոլոր առկա մետաղական մասերը պետք է նախապես մշակվեն, յուղազրկվեն և պատված լինեն պոլիմերային փոշի ներկով RAL 7012 (մոխրագույն) կամ համարժեքով: Բոլոր

	պտուտակավոր ամրակները պետք է ցինկապատ լինեն: Տեղադրումը կատարվում է մատակարարի կողմից։ Երաշխիք 1 տարի։Նկարը տրամադրվում է կից ֆայլով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«ԹԵՎԱՆՅԱՆ» ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/252 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	